ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՔԱՂՑՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Քաղցրաշեն համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Քաղցրաշեն, (0235)60055, (093)436645,
Kaghtsrashen@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 Դեկտեմբերի 2017 թվական N25

ՔԱՂՑՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 22.12.2017Թ ԹԻՎ 10 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> Հայաստանի Հանրապետության 14 հոդվածի 6-րդ կետի պահանջներով

ՈՐՈՇԵՑ

Հաստատել Քաղցրաշեն համայնքի ավագանու 22.12.2017թ թիվ 10 նիստի օրակարգը

1. Քաղցրաշեն համայնքի 2017թ բյուջեում փոփոխություն կատարելու մասին
2.Տեղական տուրքերը և վճարները հաստատելու մասին
3. Քաղցրաշեն համայնքի ղեկավարի, համայնքապետարանի աշխատակազմի, մանկապարտեզի, երաժշտական դպրոցի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:
4. Համայնքի սեփականություն հանդիսացող գյուղնշանակության հողերը մրցութային կարգով վարձակալությամբ տրամադրելու մասին:
5. Մանկապարտեզի և երաժշտական դպրոցի 2018թ ծնողական գումարների մասին:
6. Քաղցրաշեն համայնքի 2018թ բյուջեն հաստատելու մասին:

Կողմ -6 դեմ -0 Ձեռնպահ - 0

ԱԶԻԶ ՀԱԿՈԲՅԱՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՀԱԿՈԲՅԱՆ

ԼԵՈՆԻԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԻՇԽԱՆ ՍԱՀԱԿՅԱՆ

ԳԱՐԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

ՅՈՒՐԻԿ ՄԿՐՏՉՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ԳՅՈՒԼԱՄԻՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՔԱՂՑՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Քաղցրաշեն համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Քաղցրաշեն, (0235)60055, (093)436645,
Kaghtsrashen@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 Դեկտեմբերի 2017 թվական N 26-Ն

ՔԱՂՑՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2017Թ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 18 հոդվածի 5-րդ կետի պահանջներով համայնքի ավագանին

ՈՐՈՇԵՑ՝

1) Վարչական բյուջեի 01.01.01.51 (կառավարման մարմնի պահպանում) 4112 (պարգևատրում) հոդվածին հատկացնել նույն դասակարգման 4111 (աշխատավարձ) հոդվածին 100000 դրամ, իսկ 09.01.01.51 (նախադպրոցական ուսուցում) գ.ծ. դասակարգման 4239 (ընդհանուր բնույթի այլ ծառայություններ) հոդվածից 800000դրամ համայնքապետարանի աշխատակազմին պարգևատրելու համար:
2) 09.01.01.51 գ.ծ դասակարգման 4239 հոդվածից 01.01.01.51 գ.ծ դասակարգման 4234 հոդվածին հատկացնել 110000դրամ տեղեկատվական ծառայության նպատակով:

3) Ֆոնդային բյուջեի 06.04.01.52 (արտաքին լուսավորության ցանցի պահպանում և շահագործում) 5112 (շենք և շինության կառուցում) հոդվածից 980 000դրամ տեղափոխել 09.08.01.55 (կրթություն այլ դասին չպատկանող) 5113(շենք և շին. կապիտալ նորոգում) հոդվածին մանկապարտեզի շենքի ներքին էլ. լուսավորության հիմնանորոգման աշխատանքների համար, իսկ 30000 դրամ 5134 հոդվածին նախագծանախահաշվային փաստաթղթերի աշխատանքները կազմելու համար:

Կողմ -6 դեմ -0 Ձեռնպահ - 0

ԱԶԻԶ ՀԱԿՈԲՅԱՆ կողմ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՀԱԿՈԲՅԱՆ կողմ

ԼԵՈՆԻԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ կողմ

ԻՇԽԱՆ ՍԱՀԱԿՅԱՆ կողմ

ԳԱՐԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ կողմ

ՅՈՒՐԻԿ ՄԿՐՏՉՅԱՆ կողմ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ԳՅՈՒԼԱՄԻՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՔԱՂՑՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Քաղցրաշեն համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Քաղցրաշեն, (0235)60055, (093)436645,
Kaghtsrashen@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 Դեկտեմբերի 2017 թվական N 27-Ն

ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԸ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի 18-րդ կետի պահանջներով՝ Քաղցրաշեն համայնքի ավագանին

ՈՐՈՇԵՑ՝

Հաստատել Քաղցրաշեն համայնքում 2017թ –ի տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը.

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

հիմնական օբյեկտների համար՝

1) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 7000դրամ.

2) սույն կետի «1» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

ա) 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 15000 դրամ,

բ) 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 25000 դրամ,

գ) 1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 50 000 դրամ,

դ) 3001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 80000 դրամ.

3) ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

ա) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 1500 դրամ,

բ) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 2500 դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ մինչև 1500 դրամ.

բ) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի «1» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր

մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

գ) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

դ) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարության համար 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է 2500 դրամ:

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

1) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա) Մինչև 26 քմ ընդհանուր մակերես ունեցող՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 3000դրամ

բ) 26 մինչև 50 քմ ընդհանուր մակերես ունեցող՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 4000դրամ

գ) 51 մինչև 100 քմ ընդհանուր մակերես ունեցող՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 5000դրամ

դ) 101 մինչև 200 քմ ընդհանուր մակերես ունեցող՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 6000դրամ

ե) 201 մինչև 500 քմ ընդհանուր մակերես ունեցող՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 7000դրամ

զ) 501 և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10000դրամ

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա) Մինչև 26 քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 2000դրամ

բ) 26 մինչև 50 քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 3000դրամ

գ) 51 մինչև 100 քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 4000դրամ

դ) 101 մինչև 200 քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 5000դրամ

ե) 201 մինչև 500 քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 6000դրամ

զ) 501 և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10000դրամ

5. Համայնքի տարածքում՝

ա) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար 300 դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

բ) հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի, մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) տեխնիկական հեղուկների և հեղուկացված գազերի վաճառքի թույլտվության համար տեղական տուրքերը ընթացիկ տարվա համար սահմանել 150000 դրամ.

գ) խանութներում, կրպակներում, հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկում և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 30 000 դրամ.

դ) համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանել՝

հիմնական շինությունների ներսում՝

բ) 26 մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 10000դրամ

գ) 51 մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 15000դրամ

դ) 101 մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 20000դրամ

ե) 201 մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 30000դրամ

զ) 501 և ավել քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 40000դրամ

ոչ հիմնական շինությունների ներսում՝

ա) Մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1000դրամ

բ) 26 մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 2000դրամ

գ) 51 մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 4000դրամ

դ) 101 մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 8000դրամ

ե) 201 մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 15000դրամ

զ) 501 և ավել քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 20000դրամ

6. Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

ա) առևտրի օբյեկտների համար՝ 30000 դրամ.

բ) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 70000 դրամ.

գ) բաղնիքների (սաունաների) համար՝ 300000 դրամ.

դ) խաղատների կազմակերպման համար՝ 700000դրամ.

ե) շահումով խաղերի կազմակերպման համար՝ 300000դրամ.

զ) վիճակախաղերի կազմակերպման համար՝ 120000 դրամ:

7. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝

ա) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1000 դրամ.

բ) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2500 դրամ.

գ) այլ արտաքին գովազդի համար՝ 1000 դրամ.

8. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝ 1000 դրամ:

Հայաստանի Հանրապետության համայնքների անվանումները ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝ 50000դրամ:

9. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 5000 դրամ:

10. Մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար՝ մասնակիցներից վճար սահմանել 1000 դրամ:

11. Տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերի հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրման և այլ նման աշխատանքների համար՝ տեղական ինքնակառավարման մարմինների մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝ 4000դրամ:

12. Աղբահանության վճարի դրույքաչափեր սահմանել՝

ա) Քաղցրաշեն համայնքում հաշվառում ունեցող և (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ ամսեկան 100 դրամ:

Համայնքներում առկա ոչ բնակելի նպատակային նշանակության շենքերում և (կամ) շինություններում, այդ թվում՝ հասարակական, հանրային, ծառայությունների մատուցման, արտադրական, արդյունաբերական շենքերում և (կամ)

շինություններում աղբահանության վճար սահմանել ըստ շինության ընդհանուր մակերեսի հետևյալ դրույքաչափերով.

1) Առևտրի (այդ թվում՝ շուկաների), հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ ծառայություններ իրականացնող շինությունների մասով մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 50դրամ (ամսեկան):
2) Հյուրանոցների և հյուրանոցային տնտեսության ծառայություններ, ինչպես նաև այլ գործունեություն իրականացնող հասարակական շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 20դրամ(ամսեկան):
3) Արտադրական, արդյունաբերական և գրասենյակային նշանակության շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 5 դրամ(ամսեկան):
4) Կրթական, մշակութային,առողջապահական, սպորտային, գիտահետազոտական և նմանատիպ այլ հասարակական շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 3 դրամ(ամսեկան):

Կողմ -6 դեմ -0 Ձեռնպահ - 0

ԱԶԻԶ ՀԱԿՈԲՅԱՆ Կողմ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՀԱԿՈԲՅԱՆ Կողմ

ԼԵՈՆԻԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ Կողմ

ԻՇԽԱՆ ՍԱՀԱԿՅԱՆ Կողմ

ԳԱՐԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ Կողմ

ՅՈՒՐԻԿ ՄԿՐՏՉՅԱՆ Կողմ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ԳՅՈՒԼԱՄԻՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՔԱՂՑՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Քաղցրաշեն համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Քաղցրաշեն, (0235)60055, (093)436645,
Kaghtsrashen@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 Դեկտեմբերի 2017 թվական N 28-Ն

ՔԱՂՑՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ, ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ, ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ, ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> Հայաստանի Հանրապետության 16 հոդվածի 26 –րդ կետի պահանջներով համայնքի ավագանին

ՈՐՈՇԵՑ՝

Հաստատել համայնքի ղեկավարի, համայնքապետարանի աշխատակազմի, մանկապարտեզի և երաժշտական դպրոցի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը (հավելված 1,2,3)

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ - 0

ԱԶԻԶ ՀԱԿՈԲՅԱՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՀԱԿՈԲՅԱՆ

ԼԵՈՆԻԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԻՇԽԱՆ ՍԱՀԱԿՅԱՆ

ԳԱՐԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

ՅՈՒՐԻԿ ՄԿՐՏՉՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ԳՅՈՒԼԱՄԻՐՅԱՆ